ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ԽՈՋԱԲԵԿՅԱՆ Վ. Ե.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Առաջին աշխարհամարտի տարիներին շատ ժողովուրդների հետ միասին հայ ժողովուրդը ևս անցավ անասելի փորձությունների ճանապարհով: Այդ տարիներին նա ապրեց անմարդկային արհավիրքներ: Արևմտյան Հայաստանում երիտթուրքական բարբարոսների կազմակերպած ցեղասպանության, ինչպես նաև դեպի Արևելյան Հայաստան նրանց արշավանքների հետևանքով հայ ժողովուրդը կանգնել էր բնաջնջման վտանգի դեմ հանդիման: Սակայն Առաջին աշխարհամարտը միայն շարժառիթ էր իրագործելու թուրքական կառավարության վաղեմի ծրագրած ոճրագործությունը՝ հաշվեհարդար տեսնելու ոչ միայն իր տերության, այլև նրա սահմաններից դուրս ապրող հայ բնակչության հետ:

Նախապես մշակված ծրագրով երիտթուրքական կառավարությունը կիրառեց զանգվածային բնաջնջման բոլոր ձևերն ու մեթոդները: Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթն իր ստորադասներին ուղարկած հեռագրերից մեկում գրել է. «Ձեռնարկվող միջոցները ինչքան էլ դաժան լինեն, պետք է վերջ տրվի հայերի գոյությանը: Ոչ մի ուշադրություն չդարձնեք ոչ տարիքին, ոչ սեռին, ոչ էլ խղճի խայթոցին»[1]:

Նախ, երիտթուրքական կառավարությունը հաշվեհարդար տեսավ զորակոչային տարիքի հայ բնակչության հետ: Երկրորդ, հաշվեհարդար տեսան հայ մտավորականության հետ: Երրորդ, առանց սեռի ու տարիքի խտրության, սկսեցին ոչնչացնել Արևմտյան Հայաստանի ամբողջ հայ բնակչությանը: Կենդանի մնացածները, գլխավորապես կանայք և երեխաները, տեղահանվեցին և աքսորի ու փախուստի ճանապարհին դարձան սովի, համաճարակի, զինվորականների ու խուժանի հետապնդումների ու հալածանքի, հրի ու սրի զոհ:

Հարյուր հազարավոր մարդիկ իրենց վախճանը գտան Միջագետքում՝ Դեր Զորի անապատներում ու ճամբարներում, Տիգրիս ու Եփրատ գետերի ալիքների մեջ: Արևմտյան Հայաստանի շուրջ 3 միլիոն հայ բնակչությունից ոչնչացվեց 1,5 միլիոն խաղաղ, անզեն բնակչություն, իսկ մնացածը մազապուրծ սփռվեց աշխարհով մեկ՝[2] ստեղծելով հայ գաղթօջախներ բոլոր մայրցամաքներում ու բազում երկրնե-

---

[1] *Геноцид армян в Османской империи, Е., 1965, с. 9.*

[2] Նկատի չի առնված 1894-96թթ. Աբդուլ Համիդ II-ի կողմից և նրանից առաջ կազմակերպված հայ ժողովրդի ջարդերը: Միայն XIX դ. 90-ական թվականներին Աբդուլ Համիդ II-ի օրոք Արևմտյան Հայաստանում, այդ թվում՝ Կոստանդնուպոլսում, բնաջնջվեց ավելի քան 300 հազար հայ: Զեյթունում, Վանում, Սասունում և այլուր հայերը դիմեցին ինքնապաշտպանության:

1909 թ. Ադանայում և Կիլիկիայի այլ շրջաններում երիտթուրքերի կազմակերպած հայերի զանգվածային կոտորածին զոհ դարձավ 30 հազար հայ (Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 4, Ե., 1978, էջ 256):

րում: Այսպիսով, հայ ժողովրդի պատմության մեջ հատկապես առանձնանում է Առաջին համաշխարհային պատերազմը, երբ ցեղասպանությունից մազապուրծ միլիոնավոր հայեր ապաստան գտան աշխարհի տարբեր ծագերում՝ ստեղծելով սփյուռք: Հայության բնօրրան Արևմտյան Հայաստանը ցեղաթափվեց:

Զարդը դրանով չավարտվեց. թուրքական կանոնավոր զորքերն ու զանազան ավազակախմբերը հետապնդեցին Արևելյան Հայաստան շտապող անօգնական փախստականներին, որոնք երբեմն անկազմակերպ, երբեմն կազմակերպված, ճեղքելով թուրքական զորքերի օղակումները, հաստատվեցին հատկապես Արևելյան Հայաստանում: Արևելյան Հայաստանին սահմանակից բնակչության որոշ մասը կարողացավ խուսափել ֆիզիկական բնաջնջումից: Արևմտյան Հայաստանի Բասեն, Նարիման, Դիադին, Բայազետ, Կարաքիլիսա, Ալաշկերտ, Բաշկալե շրջանների, Պարսկաստանի Թավրիզ, Խոյ, Սալմաստ, Ուրմիա գավառների հայ, ասորի և հույն բնակչությունը գաղթեց Արևելյան Հայաստան:

1915 թ. հունվարի 30-ի ոչ լրիվ վիճակագրական հետազոտության տվյալներով Թուրքիայից ու Պարսկաստանից եկած գաղթականների և առհասարակ ռուսահպատակ փախստականների ընդհանուր թիվը կարճ ժամանակամիջոցում հասավ շուրջ 67 հազարի, որից մոտ 50 հազարը հայեր էին[3]: Մեծ մասը՝ 60,5 հազարը, ապաստանեց Երևանի, Էջմիածնի, Նախիջևանի, Սուրմալուի, Շարուր-Դարալագյազի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Կաղզվանի և Ախալքալաքի գավառներում[4]: Մի փոքր անց գաղթականների այդ զանգվածը համալրվեց Վանի, Մուշի, Սասունի հայ բնակչությամբ, որը վիթխարի զոհերի գնով անցավ ռուսական սահմանը և պատսպարվեց Արևելյան Հայաստանում:

Թուրքական զորքերի առաջխաղացման հետևանքով հայ բնակչության մեծ զանգվածներ թողեցին նաև Կարսի, Սուրմալուի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի ու Կաղզվանի գավառները և կուտակվեցին Արևելյան Հայաստանի մնացած գավառներում ու քաղաքներում: Ենթադրվում է, որ 1916 թ. Արևմտյան Հայաստանից դեպի Կովկաս գաղթողների թիվը հասնում էր 350 հազարի, որից 200 հազարը ապաստանել էր Արևելյան Հայաստանում[5]:

Թուրքական զորքերը երկու անգամ գավթեցին Նախիջևանի և Ալեքսանդրապոլի գավառները: Նախիջևանի գավառում ողջ հայ բնակչությունը՝ ավելի քան 53 հազար մարդ (բնակչության ընդհանուր թվակազմի շուրջ 40 %-ը)[6], գրեթե ամբողջությամբ արտագաղթեց: 1926 թ. Նախիջևանի գավառի հայ բնակչության թիվը շուրջ 5 անգամ նվազեց՝ կազմելով ընդամենը 11276 մարդ[7]:

---

[3] Հաշվարկը կատարվել է Հայաստանի Ազգային արխիվում պահվող մեկօրյա վիճակագրական նյութերի հիման վրա, տե՛ս Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 126, ց. 1, գ.. 1, թ. 936-1368, գ. 2, թ. 557-928:

[4] Նույն տեղում:

[5] **Կորկոտյան Զ.,** Ճերմակ ջարդից դեպի կարմիր շինարարություն, Ե., 1931, էջ 31:

[6] *Кавказский календарь на 1917 г., Тифлис, 1918, с. 215-221; Численность и состав населения СССР, М., 1984, с. 126.*

[7] *Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г., Краткие сводки, вып. IV, М., 1927, с. 127, 128.*

1918-1920 թթ. ջարդից փրկված և իրենց տուն ու տեղը լքած նախիջևանցի հայերին հետագայում Խորհրդային Ադրբեջանի իշխանություններն արգելեցին վերադառնալ իրենց բնօրրանը, թեև նրանց տները դատարկ էին, դռները՝ փակ, հողերը՝ անմշակ[8]: Հետագայում այդ արգելման սկզբունքն է՛լ ավելի խորացվեց, և ստեղծվեցին բոլոր խոչընդոտները՝ կասեցնելու հայերի վերադարձը:

1922-1926 թթ. Նախիջևանի փախստական հայերը բազմաթիվ դիմում-բողոքներ էին ուղարկում Ադրբեջանի և Նախիջևանի կառավարություններին՝ իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու համար: Պատասխան չստանալով՝ նրանք դիմում են միութենական համապատասխան մարմիններին: 1925 թ. մարտի 11-ին՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ռիկովի Նախիջևան կատարած այցելությունից հետո, որոշ տեղաշարժեր եղան գաղթականների հարցի լուծման ուղղությամբ: Ռիկովը Անդրկովկասի Կենտգործկոմին մեղադրեց «համատարած խորհրդային այլանդակություն»[9] ստեղծելու մեջ, որից հետո այդ կառավարության որոշ ներկայացուցիչներ գնդակահարվեցին:

ԽՍՀՄ Կենտգործկոմի կողմից Նախիջևանի գաղթականների գծով կազմված հատուկ հանձնաժողովը 1925 թ. հունիսի 26-ին Ռիկովին է հանձնում մի հատուկ դիմում, որտեղ Նախիջևանի Հանրապետության կառավարության նոր ղեկավարությունը մեղադրվում էր հայերի նկատմամբ ցուցաբերած դիտավորությունների ու հալածանքների, ինչպես նաև «անընդունակության, պահպանողականության, տգիտության և հայերի նկատմամբ ազգային թշնամանք դրսևորելու մեջ»[10]: Դիմումում ասվում էր, որ «երկրամասի ներկայիս վարչակազմը նույնքան բացասական վերաբերմունք ունի փախստական հայերի հարցի նկատմամբ, ինչպես և նախկին Ժողկոմխորհը»[11]:

Ադրբեջանի Կենտգործկոմի 1926 թ. մայիսի 6-ի որոշման մեջ նշվում է, որ «հավասարարական հողաբաշխում իրագործելու նպատակով... և Նախիջևանի ԻԽՍՀ սակավահողության պատճառով արգելվում է Նախիջևանի ԻԽՍՀ վերաբնակեցնել գյուղատնտեսությամբ զբաղվելու համար հողաբաժիններ ստանալ ցանկացողներին և դրան համապատասխան առաջարկվում է Նախիջևանի ԻԽՍՀ հողժողկոմատին հողաբաժիններ տալ միայն այն անձանց, ովքեր հանրապետություն են տեղափոխվել մինչև 1925 թ. ապրիլի մեկը»[12]: Այս որոշումը միայն անտեղյակների համար էր: Չէ որ մինչև 1925 թ. ապրիլի մեկը ոչ մի հայ չէր կարող բնակություն հաստատել Նախիջևանի ԻԽՍՀ-ում, ոչ միայն այն պատճառով, որ 1922 թ. սկսած Ադրբեջանական ԽՍՀ-ի այս տարածքը փակ էր հայ գաղթականների համար, այլև այն պատճառով, որ Նախիջևանը սահմանամերձ գոտի էր, և այնտեղ մինչև 1925 թ. ապրիլի մեկը ոչ ոք առանց գրանցման չէր կարող բնակություն հաստատել:

---

[8] ՀԱԱ, ֆ. 130, ց. 6, գ. 197:
[9] *Заря Востока, 12.III.1925.*
[10] ՀԱԱ, ֆ. 130, ց. 6, գ. 197, թ. 68:
[11] *Заря Востока, 12.III.1925.*
[12] ՀԱԱ, ֆ. 130, ց. 6, գ. 197, թ. 10:

Պատսպարվելու որևէ հնարավորություն չունենալով՝ Ալեքսանդրապոլի գավառից 15 հազար մարդ անցնում է արտասահման և Հյուսիսային Կովկաս: Հետագայում նրանց մեծ մասը վերադառնում է և բնակություն հաստատում Լենինական (Գյումրի) քաղաքում և գավառում:

Առաջին աշխարհամարտի տարիներին Արևելյան Հայաստան գաղթած բնակչության ստույգ թիվը պարզված չէ: Հրապարակված և արխիվային տվյալները, վիճակագրական աղքատիկ նյութերը մոտավոր ու զգույշ հաշվարկներ են: Այնուամենայնիվ, դրանք որոշ պատկերացում են տալիս Արևելյան Հայաստան ներգաղթած և այնտեղից արտագաղթած բնակչության թվի ու ազգային կազմի մասին: Առանձին տվյալներով միայն Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան ներգաղթածների ընդհանուր թիվն ընդունվում է 500-600 հազար մարդ: Բացի այդ, մոտավոր հաշվարկներով ենթադրվում է, որ ցարական Ռուսաստանի նախկին հայաբնակ մարզերից Հայաստանի Հանրապետություն է ներգաղթել շուրջ 150 հազար մարդ (113326-ը՝ Կարսի մարզից, 32686-ը՝ Սուրմալուի գավառից և 3977-ը՝ Արդվինի օկրուգից)[13]: Գաղթականության հոսանքն իր ոլորապտույտի մեջ ներքաշեց նաև Անդրկովկասի հայ բնակչության մեծ մասին: 1918-1920 թթ. Անդրկովկասում պատերազմի արհավիրքներին ավելացան ազգամիջյան ընդհարումներն ու ջարդերը: Մուսավաթական Ադրբեջանը վերածվեց հայ բնակչության արտագաղթի մեծ օջախի: Արխիվային ոչ լրիվ տվյալներով Առաջին աշխարհամարտի և ազգամիջյան ընդհարումների ընթացքում Ադրբեջանից արտագաղթած հայերի թիվը (հաշվի չեն առնված Ելիզավետպոլի բոլոր գավառները) կազմել է շուրջ 235 հազար մարդ[14] (199 հազարը քաղաքային վայրերից, որոնց մի մասը հետագայում վերադարձել է): Նրանց հիմնական մասը բնակություն հաստատեց Հայաստանի Հանրապետությունում, իսկ մյուս մասը Վրաստանով անցավ Հյուսիսային Կովկաս: Գանձակի և Բաքվի նահանգների դաշտավայրային շրջանների հայ բնակչության զգալի մասն ապաստանեց բարձրադիր վայրերում[15]: Մուսավաթական իշխանության տարիներին հայերի հետ մեկտեղ Ադրբեջանից արտագաղթում էին նաև այլ ազգությունների ներկայացուցիչներ: Միայն 1918-1919 թթ. արտագաղթի պատճառով Ադրբեջանի բնակչությունը պակասեց 401.5 հազար մարդով[16]: Ռուսաստան և Միջին Ասիա էին արտագաղթում Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Ախալքալաքի և Ախալցխայի գավառներից և քաղաքներից, Բաթումի ու Կարսի մարզերից:

Այսպիսով, Արևելյան Հայաստանը, որ Առաջին աշխարհամարտի տարիներին պատսպարեց Արևմտյան Հայաստանից արտագաղթած հայ, հույն, ասորի բնակչության մեծ զանգվածների, հետագայում բնակչության արտագաղթի օջախ դարձավ: Պատերազմից կիսավեր դարձած փոքրիկ երկիրը, վերածվելով ազգամիջյան

---

[13] ՀԱԱ, ֆ. 130, ց. 6, գ. 197, թ. 38:

[14] Նույն տեղում, թ. 36:

[15] Նույն տեղում, թ. 36:

[15] **Пичикян Г.,** *Народное хозяйство и кооперация Армении, Тифлис, 1927, с. 96.*

[16] *Материалы по экономической истории Азербайджана (к V Международному конгрессу экономической истории), 1970, Ленинград-Баку, с. 19.*

և քաղաքացիական կռիվների ասպարեզի, ավելի ու ավելի քայքայվեց և ընկրկեց գաղթականության հորդացող ալիքի առջև: Թուրքական զորքերի ու սովի հետապնդումներից դրդված՝ գաղթականության հոսանքը ոլորապտույտ ճանապարհ բացեց դեպի հյուսիս: Մասնավորապես, հայ, հույն և ասորի գաղթականների զանգվածները Վրաստանի վրայով շարժվեցին դեպի Հյուսիսային Կովկաս, մասամբ՝ Ուկրաինա: Նրանցից շատերը փրկություն գտան Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում, Դոնի տափաստաններում:

Ադրբեջանում Կավէվակի(ներկայացուցչի հաղորդմամբ, որը հաստատվում է Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինին կենտրոնական էվակուացիոն բյուրոյի գործակալի հղած հեռագրով, մինչև 400 հազար հայեր թուրքերի սպառնալիքների պատճառով տեղահան էին եղել և ճամփա ընկնել դեպի Հյուսիսային Կովկաս: Նրանցից 20 հազարը մերկ ու սոված երեխաներ էին: Գործակալն իր հեռագրում նշում է, որ «սովն այդ բնակչությանը կհասցնի մարդակերության»[17]: Գաղթականներից ոչ բոլորին բախտ վիճակվեց հասնել Հյուսիսային Կովկաս և Ուկրաինա: Նրանց մի մասը սովի և համաճարակի զոհ դարձավ: Այսուհանդերձ, Հյուսիսային Կովկասում ապաստանած գաղթականների թիվը հասավ 150 հազարի, որից մոտ 130 հազարը հայեր էին, մնացածը՝ հույներ և ասորիներ[18]:

Հայ բնակչությունը դեպի Հյուսիսային Կովկաս էր շարժվում Վրաստանի վրայով, որտեղ այդ ընթացքում ապաստան գտան Արևմտյան Հայաստանից գաղթած 14 հազար հայեր[19]: Նրանք բնակվեցին Արևելյան Վրաստանի համեմատաբար նոսր բնակեցված գյուղական շրջաններում: Հետագայում Թբիլիսիում հաշվվում էր մոտավորապես 25 հազար հայ, ադրբեջանցի և եզդի գաղթական[20]:

Հասկանալի է, որ նման պայմաններում խոսք չէր կարող լինել բնակչության աճի մասին: Հայաստանում 1914-1920 թթ. բնակչության ծննդի խիստ անկումն ուղեկցվեց մահացության աճով: 1919 թ. Ալեքսանդրապոլում մահացածների ավելի քան 30 %-ը մահացել է համաճարակից, 20,6 %-ը՝ այլ վարակիչ, իսկ մոտ 21 %-ը՝ մանկական հիվանդություններից[21] և այլն: Միայն 1919 թ. Երևանում մահացել է նրա բնակչության 20-25 %-ը[22]: Վիճակագիր Զ. Կորկոտյանի մոտավոր հաշվարկներով 1914-1919 թթ. Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքում բնակչությունը նվազել է ավելի քան 600 հազարով, որոնց մեծ մասն ընկել է պատերազմի դաշտում, դարձել սովի և համաճարակի զոհ, մի մասն էլ արտագաղթել է[23]: Այս թիվը իրականում, հավանաբար, ավելի մեծ է:

Մի կողմից զանգվածային ներգաղթի, իսկ մյուս կողմից՝ արտագաղթի, մահացության և ծննդաբերության մակարդակի խիստ անկման պատճառով գաղթական-

---

[17] ՀԱԱ, ֆ. 123, ց. 42, գ. 2, թ. 44:
[18] Նույն տեղում, թ. 43:
[19] *Заря Востока, 5. I. 1927.*
[20] ՀԱԱ, ֆ. 123, ց. 42, գ. 108, թ. 31:
[21] **Կորկոտյան Զ.,** նշվ. աշխ., էջ 38:
[22] Նույն տեղում, էջ 32:
[23] Նույն տեղում, էջ 39:

ների հոծ զանգվածների առկայության պայմաններում Արևելյան Հայաստանի բնակչությունը խիստ նվազեց։ Այդ պատճառով էլ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու պահին երկրում, նրա այսօրվա տարածքում ապրում էր ընդամենը 720 հազ. մարդ՝ 1913 թ. ավելի քան 1 միլիոնի և Արևմտյան Հայաստանից գաղթած 5-6 հարյուր հազար հայերի դիմաց, որոնք դարձան թուրքական արշավանքների և մահացության զոհ:

1915 թ. Թուրքիայի կազմակերպած հայոց ցեղասպանությունը առաջիններից էր աշխարհում: Հետագայում ցեղասպանություններ չէին կրկնվի, եթե ժամանակին խոշոր տերություններն անտարբեր չլինեին հայոց ցեղասպանության նկատմամբ, չնայած Թուրքիայում մի շարք պետությունների դեսպաններ իրենց կառավարություններին ազդարարում էին երիտթուրքերի պարագլուխների ձեռնարկած հայկական ջարդերի մասին: Ինչ վերաբերում է գերմանացիներին, ապա նրանք երիտթուրքերի հետ համագործակցում էին՝ կազմակերպելով հայ ժողովրդի սպանդը: 2005 թ. գերմանական խորհրդարանը ցեղասպանության 90-ամյակի առիթով, նշավակելով գերմանացի նախորդների և Թուրքիայի վայրագությունները, ընդունեց հայոց ցեղասպանությունը, իրենց արխիվային բոլոր փաստաթղթերը հրապարակավ տրամադրեց հասարակայնությանը և հորդորեց, որ հայոց ցեղասպանությունն ընդունի ու իր նախորդների անմարդկային վարքագիծը դատապարտի նաև Թուրքիան: Անցել է 90 տարի, բայց Թուրքիայի այսօրվա վարած քաղաքականության և պահվածքի մեջ ոչ մի փոփոխություն չկա:

Եթե բազմաթիվ երկրների հետ Հայաստանը կարող է վարել տնտեսական ինտեգրացման քաղաքականություն, ապա Թուրքիայի հետ այդ հարաբերությունները կարող են կրել առևտրական ապրանքափոխանակության բնույթ: Ներկա փուլում և մոտ ապագայում, մեր կարծիքով, չպետք է տարվել Թուրքիայի հետ տնտեսական այնպիսի խոր և համակողմանի կապերի հաստատմամբ, որը ժամանակի ընթացքում հանգեցնի Թուրքիայի տնտեսության հետ մեր փոքրիկ հանրապետության տնտեսության խորքային ինտեգրացմանը: Նման միտումը հղի է Թուրքիայից կախվածության, քմահաճույքի և թելադրանքի վտանգի աճով, իսկ ամեն կարգի քմահաճույքի դրսևորում խորքային հետք կթողնի ոչ միայն տնտեսության, այլև քաղաքականության, մասնավորապես, ազգային քաղաքականության, անկախության, անվտանգության և ազատության վրա: Չմոռանանք, որ Թուրքիան իր կամքը թելադրում է հենց այսօրվանից, երբ Հայաստանի և Թուրքիայի միջև շփման եզրեր ծավալված չեն, և խորքային տնտեսական կապերը բացակայում են: Հետագա տնտեսական կախվածության չափերը և դրանով հարուցվող երևույթները տեսանելի են Թուրքիայի հենց այսօրվա դիրքորոշումից:

Հայտնի է նաև, որ իր ներկա տարածքային, աշխարհագրական, տնտեսական կացությամբ և ռազմական կարողություններով Հայաստանը միայնակ չի կարող լուծել նաև Հայ դատի և պահանջատիրության խնդիրները: Ներկայումս հարցի այդպիսի լուծում չի էլ առաջադրվում: Բայց դա չի նշանակում, որ Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների, առավել ևս տնտեսական կապերի կառույցը պետք է բարձրանա պահանջատիրությունից հրաժարվելու փլատակների

վրա։ Թուրքիայի հետ այսօրվա հարաբերություններում Հայ դատը չպետք է դառնա շահարկման թեմա։ Պետք է ընդմիշտ հիշել, որ պահանջատիրությունը ոչ միայն Հայաստանում ապրող հայերի, այլև սերունդների, ամբողջ աշխարհում սփռված հայ ժողովրդի համազգային խնդիրն է, որի լուծումը մնում է պատմությանն ու սերունդներին, և այն էլ ոչ թե ուժի դիրքերից՝ առճակատմամբ, այլ պատմության տրամաբանական զարգացման ընթացքով, դիվանագիտական ճանապարհով, մարդկային առողջ բանականությամբ լուծելու համար։ Ո՞վ գիտե, կգա ժամանակը (թեև քիչ է հավանական), որ Թուրքիայում իշխող ուժերը և թուրք ժողովրդի ապագա առողջ դատող սերունդները կդատապարտեն իրենց պապերի ու ապուպապերի վարքագիծը՝ հայ ժողովրդի նկատմամբ գործադրած ոճրի, նրա պատմական տարածքներին ապօրինի տեր դառնալու համար։ Քայլ, որ ձեռնարկել են մի շարք թուրք խոշորագույն մտավորականներ, որոնք հալածվում են Թուրքիայի իշխանավորների կողմից։

Կասկած չի հարուցում, որ Թուրքիայի հետ քաղաքական, դիվանագիտական, առևտրատնտեսական հարաբերությունների բնույթն այլ կերպարանք կստանա, եթե Հայաստանը, որպես Եվրամիության անդամ, իր մասնակցությունը բերի բոլոր առաջադեմ երկրների հետ սերտ կապերի ստեղծմանը, կամ նույնիսկ կոնֆեդերատիվ հիմունքներով նրանց հետ մտնի տնտեսական ու ռազմաքաղաքական հարաբերությունների մեջ։ Դրանով իսկ Հայաստանը ոչ միայն իր տնտեսությունը կփրկի Թուրքիայի կամքին ենթարկվելուց, այլև կապահովի այդ երկրի հետ բարիդրացիական, առևտրական, տնտեսական ու դիվանագիտական հարաբերությունների հետագա ծավալումը և կապահովի սահմանային ու տնտեսական անվտանգությունը։

Չմոռանանք, որ Հայաստանը որքան էլ առաջադիմի, բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքով անգամ գերազանցի զարգացած երկրների մակարդակը, դարձյալ կմնա մի փոքրիկ պետություն՝ իր փոքրաքանակ բնակչությամբ ու տարածքով, տնտեսական ու ռազմական ներուժով և ազգային եկամտից պաշտպանության համար միջոցներ հատկացնելու ու սահմանն անվտանգ պահելու պարտադրանքով։

Հաճախ, որպես Հայաստանի անվտանգության երաշխիք, վկայակոչվում է այն անհիմն վարկածը, թե իբր Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ տեղի է ունենալու բեկում։ Եվրամիության ընկերակցության մեջ մտնելու նպատակով նա ընդունելու է արտաքին քաղաքական բարեկիրթ կեցվածք, հետևապես, այդ ընկերակցության անդամ դառնալուց հետո, կամա թե ակամա, ենթարկվելու է այն քաղաքականությանը, ինչը կթելադրվի Եվրոպայի երկրների ընդհանուր արտաքին քաղաքականությամբ։ Այսինքն՝ Թուրքիան ևս կվարի Եվրոպային հատուկ արտաքին քաղաքականություն։ Այդպիսի պատրանքի ամենաթարմ վկան Թուրքիայի կողմից Կիպրոսի մի մասի զավթումն է։

Ինչ վերաբերում է թուրքերի եվրոպական կեցվածք ընդունելուն, ապա դա քիչ հավանական է։ Արդյո՞ք մի 100 տարի հետո Եվրոպան չի ողողվի թուրքերով։ Չէ՞ որ Եվրոպայի բոլոր ժողովուրդները չեն աճում, քանի որ բնութագրվում են ու

ավելի կբնութագրվեն ծերացած բնակչությամբ և դրա հետևանքով բարձր ու բարձրացող մահացությամբ և քիչ ծնունդով: Իսկ թուրքերը ունեն և կպահպանեն բարձր աճ. բարձր է ծնունդը, բնակչությունը ծերացած չէ, մահացությունն էլ կնվազի: Ի՞նչ կլինի Եվրոպայի վիճակը 100 տարի հետո, եթե թուրքերն ընդգրկվեն Եվրամիության կազմում, և աշխատող ձեռքերի կարիք ունեցող Եվրոպան համալրվի և ողողվի երիտասարդ թուրք աշխատուժով:

Թեև ապագա ռազմաքաղաքական ուժերի փոխհարաբերությունները կանխորոշելը բարդ է, պարզ է, որ Թուրքիան միշտ էլ ժամանակի ոգին լավ է ըմբռնել և ապահովել իր համար ամենաշահեկան ելքը: Պանիսլամիզմը ինչքան էլ քողարկվի եվրոպական քաղաքականության դիմակով, երբեք չի հանդուրժի իսլամական ժողովուրդների հարևանությամբ տարածաշրջանում մխրճված և այդ ամբողջականությունը խաթարող քրիստոնյա Հայաստանի գոյությունը: Հայաստանի հետ ունեցած հարաբերություններում Թուրքիայի թելադրող կեցվածքը բխում է ուժի դիրքերից: Դա նրա աշխարհագրական բարենպաստ պայմաններն են, Արևմուտքի հետ շահավետ տնտեսական ու ռազմաքաղաքական սերտ ինտեգրացիան, արևմտյան տերությունների և իր հարևանների հետ ունեցած հարաբերություններում խուսանավելու մեծ հնարավորությունները: Այդ իսկ պատճառով Արևմուտքի երկրներին միշտ էլ ավելի շատ հետաքրքրել է Թուրքիան, քան Հայաստանը: Աշխարհագրական դիրքը որոշիչ է եղել նաև խորհրդա-թուրքական հարաբերությունների ձևավորման ընթացքում, թեև շատ էական էր նաև մուսուլմանական աշխարհի նկատմամբ Խորհրդային Միության դիրքորոշումը: Պատահական չէր, որ 1915 թ., 1918-1920 թթ., ինչպես նաև 1988-1991 թթ. Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի հարաբերություններում ո՛չ արևմտյան տերությունները, ո՛չ էլ Խորհրդային Միության կենտրոնը գործնականում հանդես չեկան Թուրքիայում և Ադրբեջանում հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող ցեղասպանության, Ադրբեջանի հայաթափության ու հայաջինջ բարբարոսական քաղաքականության դեմ: Խորհրդային Հայաստանում բոլշևիկյան կառավարությունը թույլ չէր տալիս վերհիշել հայոց ցեղասպանությունը[24]: Այդ հարցում ԽՍՀՄ հայերը 1965 թ. միացան Սփյուռքին և բարձրաձայն բողոքի ալիք բարձրացրեցին: Այսօր հայոց ցեղասպանությունը ճանաչում և դատապարտում են մոտ երկու տասնյակ խոշոր պետություններ, որոնց թուրքերը բացահայտ սպառնում են:

Թուրքական իշխանությունները Հայաստանին առաջարկում են ստեղծել հայ-թուրքական պատմաբաններից բաղկացած հանձնախումբ՝ իբր թե ցեղասպանության հարցը իրականում բացահայտելու համար: Նրանք մոռանում են, որ հայերի ցեղասպանության հարցը շատ տերությունների արխիվներում և ականատեսների կողմից ու նրանց հուշերում բազմիցս բացահայտված է, որն ավելորդ է դարձնում նոր բացահայտումը: Այս անգամ էլ թուրքերը իրենց հորինած «արխիվային փաս-

[24] Մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը խորհրդային կառավարությունը 1920 թ. թուրքական կառավարությանը տվեց նյութական օգնություն՝ ավելի քան 10 մլն ռուբլի (ոսկով) և մեծ քանակությամբ զենք ու զինամթերք, երբ Քեմալ Աթաթուրքը 1920 թ. սեպտեմբերին ռազմական գործողություններ սկսեց փոքրիկ Հայաստանի դեմ:

տերով» կխեղաթյուրեն իրականությունը: Ընդհակառակը, կմեղադրեն հայերին, թե, իբր, նրանք են ցեղասպանություն գործադրել թուրքերի և ազերիների նկատմամբ:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ АРМЯНО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЙ

ХОДЖАБЕКЯН В. Е.
Академик НАН РА

Резюме

Правительство младотурок по “заранее написанному” сценарию организовало погромы западных армян, в первую очередь расправившись с армянской интеллигенцией и с населением призывного возраста. Десятки тысяч армян погибли в Междуречье – на дорогах депортации. Полтора миллиона мирного армянского населения трехмиллионной Западной Армении было уничтожено в Османской империи. Турки вторглись также в Восточную Армению, уничтожили значительную часть ее населения. В период установления советской власти на территории нынешней Армении проживало 720 тыс. человек, в то время как в 1913 г. население Армении составляло 1 млн. чел., включая также беженцев из Западной Армении.

Турки отрицают факт Геноцида. Европеизация Турции маловероятна. Однако отуречивание Европы возможно. Турция отличается высоким естественным приростом, чего нельзя сказать о Европе с ее высокой смертностью и низким уровнем рождаемости. И если Турция войдет в состав Евросоюза, нуждающаяся в рабочей силе Европа пополнится турецкой молодежью. Не восторжествует ли при этом панисламизм со всеми вытекающими отсюда последствиями.